



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

15.04.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/39

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Մեդէքսպերտ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ՝ Վ. Վահանյանի, Կ.
Խաչունցի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊԶԲ-22-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,
բժշկական թթվածնի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ
քննող անձ), քննության առնելով «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)
կողմից 01.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից
փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին «Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 01.04.2022թ.-ին:

04.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2022/39 համարի ծածկագիրը:

08.04.2022թ.-ին և 15.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.04.2022թ.-ին:

2. «Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեղէքսպերտ» ՍՊԸ-ն 01.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀՀ պաշտպանության նախարարություն»-ը բժշկական թթվածնի գնման նպատակով հրապարակել է <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Հրավերով սահմանվում է, որ, մեջբերում եմ.

<<Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ հրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ պարավիրաբու) կողմից հայտարարված ընթացակարգին

մասնակցելու մրադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս: Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օրարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:>> մեջբերման ավարտ:

Հրավերի տեքստը, ներառյալ տեխնիկական բնութագրերը և պահանջվող հավելվածները հրապարակված են միայն հայերեն, ուստի սահմանափակվում է համակարգում գրանցված այլ անձանց, օրինակ ոչ ռեզիդենտ կամ Ռուսաստանի Դաշնությունում գրանցված կազմակերպությունների մասնակցությունը ընթացակարգին:

Համաձայն 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1454-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ 11 կետի՝ 34 կետի 1 և 2 ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<1) գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախատրակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով: Ռուսերեն լեզվով հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը>>:

Այս պահանջին չհամապատասխանող հրավեր հրապարակելու դեպքում փաստացի սահմանափակվում է համակարգում գրանցված այլ անձանց, օրինակ ոչ ռեզիդենտ կամ Ռուսաստանի Դաշնությունում գրանցված կազմակերպությունների մասնակցությունը ընթացակարգին:

Փաստացի պաշտպանության նախարարությունը միայն հրավերի հայտարարությունն է հրապարակել նաև ռուսերեն լեզվով, իսկ հրավերի տեքստը՝ ներառյալ տեխնիկական բնութագիրը, հավելվածները հրապարակված են միայն հայերեն լեզվով:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Հարկ է նշել, որ նույնաբովանդակ բազմաթիվ բողոքներ են քննվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց կողմից, սակայն կմեջբերենք ընդամենը երկու այդպիսի բողոքարկման ընթացակարգ՝ ԳԲԲԱ-ՆԳ-2020/13, ԳԲԲԱ-ԼՕ-2020/28, որոնցով ներկայացված նույնաբովանդակ երկու բողոքներն էլ բավարարվել են:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Ընկերությունը, 04.04.2022թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հավելել է հետևյալը.

«Ի լրումն «Մեդէքսպերտ» ՍՊԸ կողմից ներկայացված բողոքի, հայտնում եմ հետևյալը.

Հրավերով սահմանվում է, որ, մեջբերում եմ

«Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ պարտավորություն) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս: Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ,

կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:» մեջբերման ավարտ:

«Համաձայն 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1454-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ 11 կետի 34 կետի 1 և 2 ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ

<<1) գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ոռուերեն լեզվով: Ռուսերեն լեզվով հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը>>:

Այս պահանջին չհամապատասխանող հրավեր հրապարակելու դեպքում փաստացի սահմանափակվում է համակարգում գրանցված այլ անձանց, օրինակ ոչ ռեզիդենտ կամ Ռուսաստանի Դաշնությունում գրանցված կազմակերպությունների մասնակցությունը ընթացակարգին:

Փաստացի պաշտպանության նախարարությունը միայն հրավերի հայտարարությունն է հրապարակել նաև ոռուերեն լեզվով, իսկ հրավերի տեքստը ներառյալ տեխնիկական բնութագիրը, հավելվածները հրապարակված են միայն հայերեն լեզվով:

Հաշվի առնելով վերոգրյալը կրկին պնդում ենք մեր բողոքը պարտավորեցնել <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել <<<< ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24>> ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Հարկ ենք համարում նաև նշել, որ նույնարժեքային բազմաթիվ բողոքներ են քննվել << գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց կողմից, ուստի կմեջբերենք ընդամենը երկու այդպիսի բողոքարկման ընթացակարգ՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/13, ԳԲՔԱ-ԼՕ-2020/28, որոնք երկուսն էլ բավարարվել են:»:

Ընկերությունը, 05.04.2022թ.-ին ներկայացված մեկ այլ դիրքորոշմամբ հավելել է հետևյալը.

«Ի լրումն <<Մեղէքսպերտ>> ՍՊԸ կողմից ներկայացված բողոքի, հայտնում են հետևյալը.

1. Համաձայն հրավերի 2-րդ մաս ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ-ի՝

<<Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ պարվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մրադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պարտաստելիս:>>

2. Համաձայն ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանի՝ սահմանվել են մրցույթների փաստաթղթերի օրինակելի ձևերը, որտեղ հաստատված է նաև պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի Հավելված թիվ 2-ով սահմանված <<ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ>>-ի օրինակելի ձևը:

ՀՀ ՊՆ-ի հրավերում առկա <<ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ>>-ը չի համապատասխանում ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված <<ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ>>-ի օրինակելի ձևին (կից ներկայացնում ենք ՀՀ ՊՆ-ի Հրավերում առկա <<ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ>>-ը)

3. Որպես ամփոփում խնդրում ենք մեր բողոքը մերժելու որոշում կայացնելու դեպքում ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 6 դեկտեմբերի 2018 թ . N 600-Ն հրամանի 18 կետի համաձայն հատուկ նշում կատարել որոշման մեջ և ամբողջական ու սպառիչ հիմնավորելով ԳԲՔԱ-ՆԳ-2020/13, ԳԲՔԱ-ԼՕ-2020/28 ընթացակարգերով նախկինում արտահայտված դիրքորոշումներից և կայացված որոշումներից շեղումները՝ հրավերը ռուսերեն լեզվով

չհրապարակելու մասով, ինչպես նաև վճարման ժամանակացույցի օրինակելի ձևին չհամապատասխանող հրավեր հրապարակելու մասով հրապարակված նույնաբովանդակ որոշումներից շեղումը:»:

Ընկերությունը, 14.04.2022թ.-ին ներկայացված մեկ այլ դիրքորոշմամբ հավելել է հետևյալը.

«14.04.2022թ-ին Ձեր աշխատակազմի կողմից ստացել ենք ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուսյանի գրությունը և ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետի ՊԺԿ Գ. Փաշիկյանի տեղեկանքը:

Ներկայացնում ենք մեր դիրքորոշումը այդ փաստաթղթերի վերաբերյալ՝

1) Գրության երկրորդ էջում պատվիրատուն նշում է, որ մեջբերում են «հրավերները ռուսերենով չհրապարակելու վերաբերյալ «Մեդէքսպերտ» և «Խաչպար» ՍՊ ընկերությունների կողմից բողոքների լրացումներում բարձրացված հարցերը ամենևին չեն սահմանափակում նշված ընթացակարգերին իրենց մասնակցության իրավունքը, քանի որ վերջիններս հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ և որևէ խնդիր չունեն հայերեն լեզվի իմացության հետ» մեջբերման ավարտ:

Մեր խորին համոզմամբ, պաշտպանության նախարարությունը չունի ոչ կարողություն, և ոչ էլ իրավասություն կամ լիազորություն գնահատելու մեր ընկերության իրավունքի սահմանափակումները, ուստի ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կատարված դատողությունները անտրամաբանական են, իսկ տրված գնահատականները ամբողջությամբ անհիմն:

Եթե օրինակ Մեդէքսպերտ ՍՊԸ-ն ցանկանա մասնակցել իր կողմից բողոքարկված ընթացակարգերին ԵԱՏՄ անդամ որևէ այլ երկրներից մեկի ընկերության հետ կոնսորցիումի միջոցով ապա այդ դեպքում հայերեն լեզվի իմացության մեր գերազանց մակարդակը ոչ մի նշանակություն չի ունենալու, իսկ մեր կողմից կատարված ռուսերեն լեզվով թարգմանություններում հնարավոր է լինեն տերմինների, բառերի, արտահայտությունների, ձևակերպումների այնպիսի թարգմանություններ, որոնք կարող են չընդունվել և մերժվել պաշտպանության նախարարության համապատասխան մասնագետների կողմից համապատասխան հետևանքներով, որոնց ականատեսը եղել ենք և սցենարին ծանոթ ենք:

2) Հաջորդ նախադասությամբ պատվիրատուն նշում է, որ մեջբերում են «Վերոհիշյալ գնման ընթացակարգերի հայտարարությունները հրապարակվել են նաև ռուսերեն, որոնք տալիս են ընդհանուր պատկերացումներ գնման առարկաների

վերաբերյալ» մեջբերման ավարտ: Այստեղ առանցքային բառակապակցությունը <<ընդհանուր պատկերացումներ>>-ն է: Այս բառակապակցությունով պաշտպանության նախարարությունը փորձում է տպավորություն ստեղծել թե ընդհանուր պատկերացումները բավարար են հրապարակված ընթացակարգին մասնակցելու համար, մինչդեռ մեր ընկերության ներկայացուցիչն անձամբ է ականատես եղել, թե ինչպես են որպես << պաշտպանության նախարարության ընդունող հանձնաժողովի անդամներ ներկայացած որոշ պաշտոնյաներ անհիմն պահանջներ ներկայացրել մատակարարին, մանրամասնությամբ ստուգել պայմանագրի յուրաքանչյուր բառն ու կերտադրական նշանները, շաղկապների նշանակության վերաբերյալ յուրովի մեկնաբանականներ կատարել և այլն, ու հիմա այդ նույն մարդիկ ասում են, որ մասնակիցը կարող է առաջնորդվել «ընդհանուր պատկերացումներով >>:

3) Պատվիրատուն նշել է, որ Մեդէքսպերտ ՍՊԸ նպատակը, մեջբերում եմ <<ամեն գնով << պաշտպանության նախարարության կողմից հայտարարված գնման ընթացակարգերը չկայացած հայտարարելն է>> մեջբերման ավարտ: Նախ, Մեդէքսպերտ ՍՊԸ-ն չունի լիազորություն գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու համար: Հավանաբար պատվիրատուն նկատի է ունեցել Մեդէքսպերտ ՍՊԸ բողոքների հիման վրա գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումները բողոքարկվող ընթացակարգերը չեղյալ հայտարարելու վերաբերյալ:

Այս անհեթեթ մեղադրանքին ի պատասխան հայտնում ենք, որ Մեդէքսպերտ ՍՊԸ-ն չի բողոքարկել << ՊՆ բոլոր ընթացակարգերը, մասնավորապես 2022թ. հունվարի 1-ից առ այսօր << ՊՆ-ն հրապարակել է բազմաթիվ ընթացակարգեր, որոնցից Մեդէքսպերտ ՍՊԸ-ն բողոքարկել է մի քանիսը միայն: Սա հեշտությամբ կարելի է ստուգել gnumner.am կայքի միջոցով և համոզվել դրանում:

4) << պաշտպանության նախարարությունը իր կողմից հրապարակվող ընթացակարգերը գնումների մասին << օրենսդրության պահանջներին համապատասխան կազմակերպելու և հայտարարելու փոխարեն, զբաղված է պտտենցիալ մասնակից ընկերություններին փնտվելով և մեղադրելով, այսինքն սեփական շարքերում պատասխանատու գանելու փոխարեն մեղքը փորձում է բարդել ընթացակարգին մասնակցել ցանկացող, բայց այդ հնարավորությունից զրկված ընկերությունների վրա, այսինքն << ԶՈԻ ռազմաթշկական վարչությունը չի կարողանում կամ դիտավորյալ չի ցանկանում կազմակերպել ընթացակարգերը գնումների մասին << օրենսդրության պահանջներին համապատասխան, սակայն <<մեղավորը բողոքող ընկերություններն են>>:

5) Գրության վերջում պաշտպանության նախարարությունը փորձել է հիմնավորել հրավերների ռուսերենով չհրապարակելը՝ նշելով մեծածավալ գնումները, գնման առարկաների բազմազանությունը, դրանց մեծ մասի տեխնիկական բնութագրերի թարգմանման համար պահանջվող խիստ մասնագիտական կարողությունները, առկա աշխատանքային ռեսուրսով պարզաճ թարգմանություն կազմակերպելու անհնարինությունը:

Տրամաբանական հարց է ծագում, եթե ՀՀ ՊՆ-ն՝ ըստ իր գրության, չունի տեխնիկական բնութագրերի թարգմանության համար պահանջվող խիստ մասնագիտական կարողությունները և անհնար է համարում իր աշխատանքային ռեսուրսով պարզաճ թարգմանություն կազմակերպելը, ապա էլ ինչպես խոսենք մասնավոր ընկերությունների մասին, որոնք շատ ավելի համեստ մարդկային ռեսուրսներ և նյութական միջոցներ ունեն:

Բացի այդ, նույն գրության սկզբնամասում ՀՀ ՊՆ-ն համոզմունք էր հայտնում, որ տարբեր ընկերություններ կարող են մասնակցել, քանի որ ընթացակարգի հայտարարությունը նաև ռուսերենով է հրապարակված և դա տալիս է ընդհանուր պարկերացումներ գնման առարկաների վերաբերյալ», իսկ արդեն գրության վերջում խոստովանում է, որ խիստ մասնագիտական կարողություններ և աշխատանքային ռեսուրսներ են պետք:

6) Խիստ անտրամաբանական է ՀՀ ՊՆ «հիմնավորում»-ը նաև այն իմաստով, որ ՀՀ-ում փաստացի առկա են բազմաթիվ այլ պատվիրատուներ, ովքեր իրենց մի քանի տասնյակ չափաբաժիններով ընթացակարգերը թարգմանում են նաև ռուսերեն:

Այդպիսի պատվիրատուներ են Նորք Մարաշ ԲԿ ՓԲԸ-ն, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը և բազմաթիվ այլ պատվիրատուներ, ուստի ծայրահեղ անհրաժեշտ է պարտադրել ՀՀ ՊՆ-ին գործել «Գնումների մասին» ՀՀ օրենքին և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգին համապատասխան, ինչպես մյուս օրինակելի պատվիրատուները:

Սրացվում է, որ ՀՀ ՊՆ-ն համարում է, որ կարող է ուրնահարել մասնակից ընկերությունների շահերը, դիտավորյալ կամ պատահաբար խախտել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները ու վերջում էլ մեղքը բարդել բողոքող ընկերությունների վրա, ինչպես նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վրա փորձել ճնշում գործադրել հիշեցնելով պետական շահի և ՀՀ ԶՈՒ անվտանգության մասին: Հարց է ծագում, ընթացակարգերը հայտարարելիս ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության

պաշտոնյաները հիշում էին պետական շահի և ՀՀ ՋՈՒ անվտանգության մասին, թե ուղղակի շահարկում են դա այն ժամանակ, երբ սպառել են ՀՀ գնումների օրենսդրության դաշտում իրենց փաստարկները:

Սա բացարձակ անընդունելի մոտեցում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից, քանի որ օրենքի առաջ պետք է հավասար լինեն բոլոր պատվիրատուները անխտիր: Չի կարող ՀՀ ՊՆ-ն որպես պատվիրատու լինել բացառություն այդ շարքում:

7) Այժմ անդրադառնանք ՀՀ ՋՈՒ ռազմաբժշկական վարչության պետի ՊԺԿ Գ. Փաշիկյանի տեղեկանքին: Նախ անհայտ է, թե երբ է այդ տեղեկանքը տրամադրվել:

Բացի այդ, տեղեկանքի մեջ նշված է, որ մեջբերում եմ. «բողոքարկումների արդյունքում խաթարվել է ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության կարիքների համար պահանջվող բժշկական նշանակության ապրանքների գնման բնականոն ընթացքը, ինչի հետևանքով անհնար է դառնում հոսպիտալների ապահովումը պահանջվող կենսական նշանակության բժշկական ապրանքներով» մեջբերման ավարտ:

Հարկանշականն այն է, որ որպես գնման բնականոն ընթացքի խաթարման պատասխանավորությունը սահուն կերպով դրվել է բողոքարկողների վրա, մինչդեռ ակնհայտ է, որ եթե ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության որոշ պաշտոնյաներ դիտավորյալ կամ պատահաբար չխախտեին «Գնումների մասին» ՀՀ օրենքի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջները, ապա բողոքներ չէին ներկայացվի և որևէ գործընթաց չէր խաթարվի, այսինքն խաթարման սկզբնապատճառը հենց ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության որոշ պաշտոնյաներն են, ովքեր փորձում են իրենց կողմից թույլ տրված սխալների պատասխանավորությունը բարդել տվյալ ընթացակարգերին մասնակցելու ցանկություն ունեցող, սակայն այդ հնարավորությունից զրկված ընկերությունների վրա:»:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 04.04.2022թ.-ին թիվ /ԲԲԱ-ԼՕ/2/5707-2022 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 06.04.2022թ.-ի թիվ ՊՆ/02/1682-2022 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացնում եմ Պատվիրատուի դիրքորոշումը.

1. Պատվիրատուն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեքստը՝ ներառյալ տեխնիկական բնութագիրը և հավելվածները, միայն հայերեն լեզվով հրապարակելիս առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ «1. Գնմանը վերաբերող փաստաթղթերը կազմվում և սույն օրենքով նախատեսված դեպքերում տեղեկագրում հրապարակվում են հայերեն, իսկ գնումների, այդ թվում նախատրակավորման հայտարարությունները՝ նաև անգլերեն և ռուսերեն:»:

Գտնում ենք, որ փաստաթղթերի կազմման և հրապարակման լեզվի նկատմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 23017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործնական կազմակերպման» կարգով սահմանված և իրարից փարբերվող պահանջների դեպքում՝ պատվիրատուն պետք է առաջնորդվեր իրավական ավելի բարձր ուժ ունեցող փաստաթղթով:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ բողոքում առկա փաստացի և իրավական հիմքերը չեն համապատասխանում իրականությանը և, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեքստը՝ ներառյալ տեխնիկական բնութագիրը և հավելվածները, միայն հայերեն լեզվով հրապարակելը չի հակասում օրենսդրության պահանջներին:»:

Պատվիրատուն, 13.04.2022թ.-ի թիվ ՊՆ/02/1776-2022 գրությամբ ներկայացված լրացուցիչ դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության 2022թ. կարիքների համար ռազմաբժշկական ծառայության մասով հրապարակված թվով 13 գնման ընթացակարգերը ՀՀ գնումների հետ կապված բալո բներ քննող անձի մոտ բողոքարկվել են «Մեդէքսպերտ» և «Խաչպար» ՍՊ ընկերությունների կողմից:

Բողոքները վերաբերել են գնման ընթացակարգերի հրավերներում՝ ձեռքբերվող ապրանքների տեխնիկական բնութագրերի «Ծանոթություն» բաժնում սահմանված պահանջներին, որոնց անհրաժեշտությունն ու կարևորությունը մենք հիմնավորել ենք ՀՀ ՊՆ կողմից ներկայացված բրավոր դիրքորոշումներում և բողոքների մասով կայացած քննության նիստերում:

Ձեր 01.04.2022թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/27 որոշմամբ՝ «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության կողմից 11.03.2022թ-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/27 ծածկագրով բողոքն անհիմն լինելու պատճառաբանությամբ ամբողջությամբ մերժվել է:

«Մեդէքսպերտ» և «Խաչպար» ՍՊ ընկերությունները օգտվելով իրենց իրավունքից ներկայացրել են բողոքների լրացումներ, որոնք որնև առնչություն չունեն ի սկզբանե ներկայացված բողոքների բովանդակության հետ (վճարման ժամանակացույցի անհամապատասխանություն, հրավերի ռուսերեն լեզվով հրապարակման պահանջ), և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել են կայացնել որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ գնահատող հանձնաժողովներին՝ գնանշման հարցման ընթացակարգերը չկայացած հայտարարելու մասին կայացնել որոշում:

Ձեր 08.04.2022թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/35 որոշմամբ բավարարվել է «Մեդէքսպերտ» ՍՊ ընկերության բողոքը՝ պարտադրելով ՀՀ պաշտպանության նախարարությանը ՀՀ ՊՆ ԳՀԱՊՁԲ-22-9/20 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Հարկ է նկատել, որ ռուսերեն լեզվով հրավերները չհրապարակելու վերաբերյալ «Մեդէքսպերտ» և «Խաչպար» ՍՊ ընկերությունների կողմից բողոքների լրացումներում բարձրացված հարցերը ամենևին չեն սահմանափակում նշված ընթացակարգերին իրենց մասնակցության իրավունքը, քանի որ վերջիններս հանդիսանում են ՀՀ ռեզիդենտ և որևէ խնդիր չունեն հայերեն լեզվի իմացության հետ (նշվածը հավաստվում է նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքները և լրացումները հայերեն լեզվով ներկայացվելու փաստով): Ավելին, վերոհիշյալ գնման ընթացակարգերի հայտարարությունները հրապարակվել են նաև ռուսերեն, որոնք տալիս են ընդհանուր պատկերացումներ գնման առարկաների վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում հիշյալ ընկերությունները լրացուցիչ տեղեկություններ կարող էին ստանալ գնահատող հանձնաժողովին հարցում ուղարկելու կամ հրավերում նշված հեռախոսահամարով գնահատող հանձնաժողովի քարտուղարին զանգահարելու միջոցով ինչից սակայն վերջիններս չեն օգտվել:

Վերլուծելով «Մեդէքսպերտ» և «Խաչպար» ՍՊ ընկերությունների քայլերը՝ ակնհայտ է դառնում, որ վերջիններիս նպատակը՝ ամեն գնով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված գնման ընթացակարգերը չկայացած հայտարարելն է, ինչը կրերի ՀՀ ՋՈՒ ապահովման խնդիրների առաջացման և բնականոն գործունեության խաթարման (ՀՀ ՋՈՒ ԳՇ ռազմաբժշկական վարչության տեղեկանքը կցվում է):

Գնման ընթացակարգերի հրավերները ոռուերեն լեզվով չհրապարակելու վերաբերյալ հայտնում եմ, որ հաշվի առնելով ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպվող մեծածավալ գնումները, գրանցում ներառված գնման առարկաների թարգմանությունը, ինչպես նաև վերջիններիս մեծ մասի տեխնիկական բնութագրերի թարգմանման համար պահանջվող խիստ մասնագիտական կարողությունները, առկա աշխատանքային ռեսուրսով հնարավոր չէ կազմակերպել պարզաճ թարգմանություն: Իսկ թարգմանչական ծառայությունների ձեռքբերման դեպքում էապես կերկարեն գնման գործընթացները, ինչի արդյունքում կառաջանա ՀՀ ՋՈՒ ապահովման խնդիր:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ ՀՀ ՊՆ կողմից կազմակերպված ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/15, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/17, ՀՀ-ՊՆ ԳՀԱՊՁԲ-22-9/18, ՀՀ-ՊՆ-ՎՀԱՊՁԲ-22 9/19, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/21, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/22, ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/23, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/25, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/26, ՀՀ-ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30 ծածկագրերով գնման ընթացակարգերի հրավերները ոռուերեն լեզվով չհրապարակելու պատճառաբանությամբ ներկայացված բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնելուց հաշվի առնել ստեղծված իրավիճակը, ՀՀ պետական ու պաշտպանական շահերը, ՀՀ ՋՈՒ անվտանգության խնդիրները և մերժել այդ բողոքները:»:

4. ԳԲԲԱ-LO-2022/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական թթվածնի ձեռքբերման նպատակով 16.03.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր -

գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) բացի այլ պայմաններից սահմանվել է, որ՝

Ապրանքը պետք է ունենա.

- Իրավասու կառույցի կողմից տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագիր /պատճեն/:

- արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի /ապրանքատեսակների խմբաքանակի/ համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը, որոնց պատճեններն անհրաժեշտ է ներկայացնել ապրանքների մատակարարման ժամանակ:

- Բալոնների լիցքավորումը և մատակարարումը պետք է իրականացվի ՀՀ ՋՈՒ ռազմաթշկական վարչության ստորաբաժանումների հայտերի հիման վրա:

- Ապրանքը պետք է մատակարարվի՝ ք. Երևան, Մուրացան 115:

- Կնքվելիք պայմանագրով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրին համապատասխանող և դրա որևէ բաղադրիչի գծով որակական հատկանիշները գերազանցող ապրանք մատակարարելու դեպքում հնարավոր է ապրանքի ընդունումը, եթե առկա է հայտը նախագծող ներկակացուցչի (ներկայացուցիչների) գրավոր մասնագիտական եզրակացությունը:

iii. Պաշտոնական տեղեկագրի՝ www.procurement.am (www.gnumner.am) և www.armeps.am կայքերում առկա տեղեկատվության համաձայն՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը հրապարակված չէ ռուսերեն լեզվով:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Չարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը.

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը.

3. օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառությանին (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ

տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ գնմանը վերաբերող փաստաթղթերը կազմվում և սույն օրենքով նախատեսված դեպքերում տեղեկագրում հրապարակվում են հայերեն, իսկ գնումների, այդ թվում՝ նախաորակավորման հայտարարությունները՝ նաև անգլերեն և ռուսերեն: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով: Ռուսերեն լեզվով հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական թթվածնի ձեռքբերման նպատակով 16.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքը պետք է ունենան՝

- Իրավասու կառույցի կողմից տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագիր /պատճեն/:

- արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի /ապրանքատեսակների խմբաքանակի/ համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը, որոնց պատճեններն անհրաժեշտ է ներկայացնել ապրանքների մատակարարման ժամանակ:

- Բալոնների լիցքավորումը և մատակարարումը պետք է իրականացվի ՀՀ ՋՈՒ ռազմաբժշկական վարչության ստորաբաժանումների հայտերի հիման վրա:

- Ապրանքը պետք է մատակարարվի՝ ք. Երևան, Մուրացան 115:

- Կնքվելիք պայմանագրով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրին համապատասխանող և դրա որևէ բաղադրիչի գծով որակական հատկանիշները գերազանցող ապրանք մատակարարելու դեպքում հնարավոր է ապրանքի ընդունումը, եթե առկա է հայտը նախագծող ներկակացուցչի (ներկայացուցիչների) գրավոր մասնագիտական եզրակացությունը:

Պաշտոնական տեղեկագրի՝ www.procurement.am (www.gnumner.am) և www.armeps.am կայքերում առկա տեղեկատվության համաձայն՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը հրապարակված չէ ռուսերեն լեզվով:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված

էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված պայմանները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի և բավարար

ապացույց առ այն, որ վերջինիս կողմից տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված պայմանների մասով թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրն կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 21-րդ և 22-րդ կետերի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա պայմանները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Ինչ վերաբերում է հրավերը ռուսերեն լեզվով չհրապարակելու վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված փաստական հանգամանքներին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» գնանշման հարցման ընթացակարգը հրավերը ռուսերեն լեզվով չհրապարակելով, գործել է ոչ իրավաչափ, քանի որ քարտուղարը գնման ընթացակարգի հրավերի տեքստը՝ նաև ռուսերեն լեզվով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով պետք է հրապարակեր տեղեկագրում, սակայն հրապարակել է միայն հայերեն լեզվով, որի պարագայում կարող է առաջանալ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթների խախտում, այն է՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, ինչպես նաև Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների խախտում, այն է՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Սակայն, վերը նշված իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, ուսումնասիրելով Պատվիրատուի 13.04.2022թ.-ի թիվ ՊՆ/02/1776-2022 գրությամբ և Ընկերության 14.04.2022թ.-ին ներկայացրած լրացուցիչ դիրքորոշումները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում առկա չէ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի և 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների խախտում, հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ռուսերեն լեզվով հրավերի չհրապարակելու հանգամանքը պետք է ուղակիորեն առաջացնի մասնակցության իրավունքի սահմանափակում կամ անհավասար պայմաններ ստեղծի գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնող մասնակիցների համար: Այդ դեպքում է միայն հնարավոր փաստել, որ առկա է Օրենքի վերոնշյալ դրույթներով սահմանված սկզբունքների խախտում: Ընդ որում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ռուսերեն լեզվով հրավերի չհրապարակելու հանգամանքով պայմանավորված բողոք ներկայացնելը չպետք է լինի ինքնանպատակ ու ցանկացած դեպքում (առանց որոշակի խոչընդոտման հանգամանքի առկայության կամ մրցակցության սահմանափակման) հիմք հանդիսանա ընթացակարգը չկայացած հայտարարելու համար:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից բողոքներ են ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված մի շարք բժշկական նշանակություն ունեցող ապրանքատեսակների գնման ընթացակարգերի դեմ. Մասնավորապես՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/16», «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/15», «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/17», «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/18», «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/19», «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/20», «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» և «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» (այսուհետ նաև՝ Ընթացակարգեր), որոնց չափաբաժինների թիվը կազմում է ընդհանուր առմամբ 360 և ավելի:

Ընկերության կողմից ներկայացված վերոնշյալ բողոքների իրավական ու փաստական հանգամանքները վերաբերում են հրավերի ռուսերեն լեզվով հրապարակված չլինելու արդյունքում վերջինիս մասնակցության իրավունքի սահմանափակմանը, իսկ պահանջները նույնն են՝ ընթացակարգը չկայացած հայտարարելուն պարտավորեցնելն է:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն գործով Ընկերության կողմից չեն ներկայացվել այնպիսի վերաբերելի և թույլատրելի ապացույցներ, որոնցով կհիմնավորվեին վերջինիս սուբյեկտիվ իրավունքների խախտման փաստի կամ խախտման առաջացման վտանգի առկայությունը, Ընթացակարգերի շրջանակներում (360 չափաբաժիններ)

ներկայացված բողոքների առումով իր իրավական պաշտպանության իրական (ռեալ) լինելու փաստը: Հետևաբար Ընկերության կողմից Ընթացակարգերի դեմ ներկայացված բողոքներով առկա փաստական հանգամանքները վերացական են և ելնում են հավասար մրցակցության սահմանափակման հնարավոր, ենթադրյալ տեսլականից՝ չպարունակելով որոշակի և իրական (ռեալ) փաստական տվյալներ:

Ավելին, Բողոքներ քննող անձը, Օրենքի 50-րդ հոդվածի դրույթների հաշվառմամբ, հարկ է համարում նաև հավելել, որ գնումների գործընթացի բողոքարկումը չպետք է լինի ինքնանպատակ և գնումների գործընթացի անհարկի հետաձգման պատճառ հանդիսանա: Պետական գնումների անհրաժեշտությունը պայմանավորված է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների պատշաճ իրականացման հրամայականով, և այդ գործընթացների անհարկի հետաձգումները կարող են արհեստական խոչընդոտներ ստեղծել նշված մարմինների ամենօրյա գործունեության համար:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022թ.-ին ներկայացված բողոքով՝ հրավերի ռուսերեն լեզվով հրապարակված չլինելու վերաբերյալ բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր չեն, որպիսի պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգն ենթակա չէ չկայացած հայտարարման:

Ուստի, վերը բերված եզրահանգումների ու դատողությունների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և մերժման ենթակա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեղէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/39 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝**



ԼԵՎՈՆ ՕՎԱՆՅԱՆ